



բերել Որատ Վեռնէի խօսքը իր հայրենակից Կիւտին, որ ծովանկարիչ է ինքնին. «Այսպիսի բան՝ ամբողջ կեանքիս մէջ ես չէի մտաբերած»<sup>1</sup>:

Նկարահանողը պատկուցաւ Նապոլէոն Գ.էն, Պատուոյ լեգէոնի ոսկի շքանշանով:

Արուեստագէտը պիտի դառնար Ռուսաստան ծանրաբեռնուած յաղթանակի դարին ճիւղերով: Իր վերադարձը Կ. Պոլսոյ վրայէն էր, ուր իրեն ուղեկից եղաւ իր եղբայրը Հ. Գաբրիէլ, որ Սարգիս Թէոդորեանի եւ Ամբրոսիոս Գալֆայեանի հետ թողած էր Ս. Ղազարի Միաբանութիւնը եւ Կաթողիկէ Եկեղեցին: Հ. Գաբրիէլ Բեսարաբիոյ մէջ ստանձնած թեմական բարձր պաշտօնը կը պարտի ո՛չ իր զինանականութեան եւ ո՛չ ալ իր ազգագուտ աշխատանքներուն, այլ անոր իսկական հիմք փնտռելու ենք իր նկարիչ եղբոր Ալեքսանդր Բ.ի հետ մշակած բարեկամութեան մէջ:

Նկարչի սիրոյն՝ կայսրը շնորհեց Հ. Գաբրիէլի Խալիբեան դպրոցը բանալու առանձնապարզեւր, նաեւ տպարանի մը բացումին հրամանագրերը<sup>2</sup>:

Երբ Ալվազովսկի իր եղբոր գերքն ապահովելէ ետք՝ իր վրձինի աշխատութիւնը վերսկսաւ, մարաշխոս Պէլլիսիէէն ընդունեցաւ ողջունաչատ, սիրալիք նամակ մը, ուր անիկա կը յայտնէր իր այցը Սթեփ, բայց «այս անգամ ո՛չ իբրեւ թշնամի՝ այլ իբր հիւր եւ բարեկամ»:

1858ի ձմեռը, նկարիչը կը գտնենք Պետերբուրգի իր արհեստանոցին մէջ: Նա դուռնակաւ ու վրձիններու խորձ մը ձախ ձեռքին, ընկղմած իր յղացումներու աշխարհին մէջ՝ կը նկարէր: Ինքնամփոփ լըջութիւնը, իր մտացի ու լայն ճակատին պոստուսները եւ իր աչքերուն խոհալից հայեացքն անոր կու տային հին պատգամի մը գերմարդկային պատկանելիութիւնը:

Իր աշխատելակերպի մասին ականատես մը — Արեւելեան Մամուլի խմբագիրը — հետաքրքրաշարժ բայց կարճ նկարագրութիւն մը կ'ընէ, որ կը նմանի շարժանկարի մէկ վազանցուկ պահին. «Կերպ մը ահ ու պատկանանք կը յուզէր զիս, երբ ներկայացայ (Ալվազովսկի) ... սակայն իր սիրալիք ընդունե-

<sup>1</sup> Հ. Վ. Հացունի, Ալվազեան Յովհաննէս ծովանկարիչ:  
<sup>2</sup> Բ. Բերբերեան, Անահիտ, 1932, թ. 1—2, էջ 92—101:

լութիւնը գերը (նամակ մը) կարգալէ ետեւ՝ ցրուեց այլալուծիւնս, մանաւանդ իր համակրելի դէմքն, անուշ ու սուր աչուներն, վայելուչ հասակն եւ պարզ ու հրապուրելի ձեւերն լուրջովին գրաւեցին սիրտս, եւ ինձ համարձակութիւն տուին այցելութեանս նպատակին վրայ երկարօրէն խօսել...: Երբ կը գովէի շափաւոր լեզուով իր հանձարն, Բնական տուրք մ'է, ըսաւ, եւ վրձինն առնելով իբր փորձ՝ սկսաւ շարժել արագ արագ կտաւին վրայ. եւ յանկարծ, գոյներու քառսէն եւ խառն ի խառն ստուերներէն՝ կենդանի, ակնախաղ առարկաներ դուրս կը ցայտէին, եւ յանկարծ լուսինն՝ որ իր ամոյն արծաթի նշոյններն կը սփռէր ալէկոծ ծովու մը վրայ, եւ հեռուն նաւ մը որ կը մաքառէր կատաղի այրաց դէմ, մերթ անդունդներու խորն դարավիժելով եւ մերթ կոհակներու կատարը տատանելով կ'ընէին: Նկարչն իբր թէ ինք էր ահարկու ու վսեմ տեսարանին հեղինակն՝ անտարբեր ու ժպտուն դէմքով ինձ կը նայի, եւ ես դմայլած կ'ըսեմ. Գո՛նչ բնական տեսարան, — Եւ իրօք, բնութիւնն եղած է միշտ իմ վարպետս, ըսաւ անուանի նկարիչը, թէ եւ երբեմն անոր խորտ ու բորտ կողմերն ուղղելու յանդգնութիւնն ունիմ, եւ արուեստին հիւսիքն անոր ազդելու<sup>3</sup>:

Այս քանի մը ընդգծեալ սողերու մէջ՝ վարպետն երկու կարեւոր հաստատումներ կ'ընէ. նախ՝ թէ իր արուեստն ուսած է բնութիւնը ունկնդրելով, անոր հոգիին մէջ թափանցելով իր խորամուխ հայեացքով. երկրորդ՝ թէ նա չի՝ սիրեր ամէն ինչ որ բնութեան մաս է՝ արուեստի աշխարհին մէջ նոյնութեամբ հանդերձաւորել: Անիկա չի գոհանար իրապաշտ յղացումով, իր վիպայնութեան նուրբ ճաշակը դատանիւն է կառուցուելիք բոլոր մեծամեծ գործերուն:

Անիկա եղական գործելակերպ մ'ունէր: Ամէնէն դժուարամտեցիլի հուժ ատաղձին կը մերձենար նկարիչը անայլայլ, անչփոթ ու ինքնավստահ «ժէստով»: Իր վրձինի հաբուածներն որքան արագ, նոյնքան կշուաւոր ու մտացի կերպով կ'իջնեն պատտուի վրայ: «Աշխարհի ստեղծագործութիւնը» որ կարելի է իր ամէնէն տարածուն նկարներէն մին համարել՝ ութ ժամուան ընթացքին աւարտեց, զարմանալի բարեխղճութեամբ յօրինուած: Նշանակալից է անոր «Համաշխարհային

<sup>3</sup> Արեւելեան Մամուլ, 1900, էջ 379:

ջրհեղեղը», ո՛չ այնքան անոր համար, որ անիկա կըցած է հոն ներկայացնել մարդկութեան պատմութեան մէջ յիշուած այդ տաղանապալի օրը իր բոլոր հոգեխօսական երեւոյթներով, այլ աւելի իր հոն ցոյց տուած խիզախութիւնը մարդանկարչութեան սահմանին մէջ՝ որ աննախընթաց էր իր յայտնութեամբը:

Այս մեծ պատաստով՝ անիկա ամենամեծ փաստարկութիւնը բերաւ իր տիրականութեան՝ նաեւ այդ իր երկրորդարար մշակած ճիւղին մէջ: Նկարչն հզօր երեւակայութիւնը, բուռն զգայնութիւնն ու դաստարութեան ու ըմբռնումի վիպային ճաշակը հաստեցին մեզի թէ անիկա իր կարողութենէ լատար չէր զղար մարդկային մարմնի դալարումներուն ամենազգի ներկայացումը, քաջ զուգընթաց վարպետութեամբ արտայայտեց իր ստեղծագործ ոյժին ու զգայնութեան անսպառ ազդեւրը, որ ուղղակի իր նութեան անսպառ ազդեւրը, որ յորհրդանահատականութեան, հանձարի մը խորհրդանահատ ներքին երակներէն դուրս կը ժայթքէ: շատ ներքին երակներէն դուրս կը ժայթքէ: Գանգուածային ու լայնանիստ ապառաժներու ահեղ կոյտին վրայ նետած է անիկա ջրհեղեղի անհրաժեշտ մարդկի, երկնքի սահմանը ներքէն բացուած են, ու ջուրը տակաւ կը բարձրանայ բարձրագլուխ կատարները: Ջրերու սոյզէն սարսափահար վիշապներ ժայթի անձանթ խոռոչներէն դուրս կը վիժեն հասկը թափալ, ու վարը, բարձրացող ջուրի մէջ կը կնիւթան մամուլ մը կ'երեւի, որ իր վայրի կրկնաթանի մամուլ մը կ'երեւի, որ իր վայրի ոյժերը վերջին անգամ բնազդօրէն հաւաքած՝ կարծես յետին փորձն պիտի ընէ վրկութեան կեանքի եւ մահուան պայքարին առաջ: Պատկանքի եւ մահուան պայքարին առաջ, ուսկէ տառին երկինքը մուսլ է եւ ահաւոր, ուսկէ միայն անյուսութիւնը կը կաթիլ բոլոր անոնց, որ միս ունին եւ ընդունելին՝ շունչ...:

Պատմա-կրօնական այսպիսի ողբերգական բնարանի մը ձեւնարկը մենք կը կարծենք ըլլալ հետեւանքն այն խոր զննութեան՝ զոր Ալվազովսկի ունեցաւ Ռաֆայէլի եւ Միքէլ Անջելոյի համարնական նկարներուն ուսումնասիրութեան արիթմով<sup>4</sup>: Սակայն, դաստիարակութեան արիթմով<sup>5</sup>:

<sup>4</sup> Հոռոմի Սիբուսեան մատուցած մէջ Միքէլ Անջելոյի «Ջրհեղեղը», որմանկար: Ինչպէս քննադատուած է արդէն՝ հանձարն այս նկարին մէջ շատ մատուցութիւններուն հետ թողած է համեմատականութեան

դաստիարակ ներշնչումէ անդին չ'անցնիր այդ երկու նկարներուն ազդեցութիւնը նկարչի ստեղծագործութեան մէջ:

1860—1867 թուականներուն համեմատաբար աւելի բեղմնաւոր յայտնուեցաւ ծովանկարիչը: Իր կախարհ վրձինէն գոյութեան եկան աւելի քան 200 գործեր: Նկարիչը եւս կը զգար իր բախտաւորութիւնը, տեսնելով այնքան հեշտօրէն յառաջ բերուած եւ հասունութեան կնիքով դրոշմուած բազմաթիւ պատմութեան կնիքներ, թէ իր ներքնաշտառներ: Նա կ'ըմբռնէր, թէ իր ներքնաշտառներն մէջ վսեմ դաշնաւորութեան էին խարհին մէջ վսեմ դաշնաւորութեան յիշողութեան չորս հզօր կարողութիւններ՝ յիշողութիւն, Երեւակայութիւն (համադրող, վերլուծող, Երեւակայութիւն (համադրող, վերլուծող) ու ստեղծող), զգայնութիւն եւ բարձրագոյնութիւն: Ասոնց հիմքն էր կազարազարթութիւն: Ասոնց հիմքն էր կազարազարթութիւնը կամ գեղարուեստական ուսմունքը հարազատ բնութեան:

Ներկի գործածութեան մէջ վարպետը սակաւապէտ էր դարձեր, իսկ գծագրութեան հիմնական գործը այլեւս ինքնարուխ, հաճելի մէկ աշխատանք մըն էր: «Կը բաւէր իրեն փնտրել մը կաթիլ ներկ նետել եւ քանի մը դիմ քանի մը կաթիլ ներկ նետել եւ քանի մը դիմ ուրուադրել, եւ ահա հրաշալիք մը յերեւան կու գար, դիւթիչ, հմայիչ»<sup>5</sup>:

Սակայն իր դաշտանկարային, կենդանական, պատմա-կրօնական, առատուկային եւ ամէնէն աւելի ծովային ու ռազմային ուղղութիւններու մէջ ձեռք բերած յաջողութիւնները կանգնած էին միայն ու միայն իր յարատեւ աշխատութեան ու այն ընդել ու անկեղծ տուրքին վրայ, որ բնապաշտօրէն յարած էր բներեւոյթներուն: Անիկա ինքն իր ուսման հիմքերը ուսումնասիրութիւններով մէջ, իր սեփական ուսումնասիրութիւններով մէջ, իր սեփական ուսումնասիրութիւններով մէջ, իր սեփական ուսումնասիրութիւններով մէջ, իր սեփական ուսումնասիրութիւններով մէջ, իր սեփական ուսումնասիրութիւններով մէջ:

<sup>5</sup> Հանրապետական 1900, թ. 93:



